ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2020թ. թիվ 624-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի
Ն 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հաշվի առնելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 26.08.2020թ. թիվ 477 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. հունվարի 15-ի ««Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 10-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1. Հավելվածի «Ախտորոշիչ լաբորատոր հետազոտություններ» բաժնի «Կլինիկական հետազոտություններ» մասի 8-րդ տողում «1000» թիվը փոխարինել «2000» թվով:

2. Հավելվածի «Ախտորոշիչ լաբորատոր հետազոտություններ» բաժնի «Կլինիկական հետազոտություններ» մասը լրացնել նոր՝ 25-րդ և 26-րդ տողերով:

25.	Հելիկոբակտեր պիլորի որոշում թեսթային եղանակով	1 հետազոտություն	4000
26.	Գիարդիա լյամբլիայի որոշում թեսթային եղանակով	1 հետազոտություն	5000

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

28.08.2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 28
ք.Վանաձոր